



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔ
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6/1**

<<08>> փետրվարի 2024 թվականի գ.Տեղ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏ**

Նիստը արձանագրում է՝

**Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար՝
Լիանա Մանուչարյանը**

Նիստին մասնակցում են՝

Տեղ համայնքի ավագանու թվով 9(ինը) անդամներ՝

1. Առաքելյան Վահե Վարդանի
2. Դալլաքյան Արման Յուրիկի
3. Ղուլունց Դավիթ Արամայիսի
4. Ղուկասյան Արագած Արշավիրի
5. Միրզոյան Արամ Գագիկի
6. Միքայելյան Աննա Միքայելի
7. Շեգունց Ռոմիկ Ռուլանդի
8. Սիմոնյան Լորա Ռաֆիկի
9. Բաղդասարյան Նազիկ

Բացակայում են Տեղ համայնքի ավագանու թվով 6(վեց) անդամներ՝ Կարեն Բաղդասարյանը, Սևադա Դանիելյանը, Ասպետ Գալստյանը, Մասիս Զեյնալյանը, Հայրապետ Հայրապետյանը և Արգամ Հովսեփյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Համայնքի բոլոր բնակավայրերի վարաչական ղեկավարները և օպերատորները, Տեղ համայնքի անասնաբույժ Արագած Ղուլունցը և համայնքի բնակիչներ:

Նիստը վարում է համայնքի ղեկավար՝ Դավիթ Ղուլունցը

ԼՍԵՑԻՆ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԵՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ
ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի ՎԵՑԵՐՈՐԴ
ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 64-րդ և 65-րդ հոդվածներով, Համայնքի ավագանին **որոշում է.**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 8-ի վեցերորդ նստաշրջանի առաջին նիստի օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմը հաստատելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 23-ի N18-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող գույքերի 2023 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:
4. ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող Տեղ համայնքի Տեղ գյուղի Ս. Բարխուդարյան փողոցի թիվ 11 հասցեում գտնվող համայնքային զարգացման կենտրոնի տարածքից «Գործընկերություն և ուսուցում» ՀԿ-ին անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով 150քմ մակերեսով տարածք հատկացնելու մասին:
5. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 23-ի N 15-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին:
6. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 23-ի N N16-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին:

7. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 25-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին:
8. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N26-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին:
9. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N29-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին:
10. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի Տեղ գյուղի Արցախի խճուղի թիվ 12/3 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդային կարգով օտարելու մասին:
11. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N22-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
12. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2021-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը ի գիտություն ընդունելու մասին:
13. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2023 թվականի բյուջեի կատարման չորրորդ եռամսյակի կատարման մասին:
14. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու հերթական վեցերորդ նստաշրջանի երկրորդ նիստի գումարման օրը սահմանելու մասին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ԿՈՂՄ-9

ԴԵՄ-0

ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 6-ՐԴ ՆՍԱՇՐՋԱՆԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու (այսուհետ՝ Ավագանի) կանոնակարգի 88-րդ և 89-րդ կետերի դրույթներով, քվեարկության արդյունքներով, Համայնքի ավագանին **որոշում է**.
Հաստատել ավագանու 6-րդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի հետևյալ կազմը՝

- 1) Աննա Միքայելյան- «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,
- 2) Արման Դալլաքյան - «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,
- 3) Կարեն Բաղդասարյան –«Ապրելու երկիր» խմբակցություն,
- 4) Ասպետ Գալստյան - «Ապրելու երկիր» խմբակցություն

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ԿՈՂՄ-9

ԴԵՄ-0

ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 18-
Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածի 2-րդ կետով. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի (այսուհետ՝ Համայնք) առաջարկությունը, Համայնքի ավագանին **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 18-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

- 1) Որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «եկամուտների գծով՝ 288073,387 հազ. դրամ» բառերը փոխարինել «եկամուտների գծով՝ 329468,874 հազ. դրամ» բառերով:

2) Որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «ծախսերի գծով՝ 288073,387 հազ. դրամ» բառերը փոխարինել «ծախսերի գծով՝ 366217,622 հազ. դրամ» բառերով:

3) Որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի «Դիֆիցիտը (պակասուրդը)՝ 36748,748 հազ. դրամ»:

4) Որոշման 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերի նախատեսված հատվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ԿՈՂՄ-9

ԴԵՄ-0

ՁԵՆՆՊԱՀ-0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ
ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԵՐԻ 2023
ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱԱՏՂԻԿ ՂԱՐԱԳՅՈՂՅԱՆ/

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 184-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի և 77-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով, Համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող գույքերի 2023 թվականի գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելված 1-ի և հավելված 2-ի:

2. ՀՀ Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ԿՈՂՄ-9

ԴԵՄ-0

ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ, ՏԵՂ ԳՅՈՒՂԻ, Ս. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ ՓՈՂՈՑԻ, ԹԻՎ 11 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՏԱՐԱԾՔԻՑ «ԳՈՐԾՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ» ՀԿ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՄՇՏԱԿԱՆ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ 150ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի 685-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով «Գործընկերություն և ուսուցում» Հասարակական կազմակերպության 22.01.2024թ. N 2034 գրությունն ու Տեղ համայնքի ղեկավարի (այսուհետ՝ Համայնք) առաջարկությունը, որոշման նախագծի կողմ-9, դեմ-0, ձեռնպահ-0, քվեարկության արդյունքներով, Համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, Տեղ համայնքի Տեղ գյուղի Ս.Բարխուդարյան փողոցի թիվ 11 հասցեում գտնվող համայնքային զարգացման կենտրոնի տարածքից 150 քմ(կադաստրային ծածկագիր՝ 09-101-0019-0028) մակերեսով տարածք 1(մեկ) տարի ժամկետով անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով հատկացնել «Գործընկերություն և ուսուցում» ՀԿ-ին, Տեղ համայնքում համալիր սոցիալական ծառայությունների կենտրոն ստեղծելու և գործունեություն ծավալելու նպատակով:

2. Համայնքի ղեկավարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով «Գործընկերություն և ուսուցում» հասարակական կազմակերպության հետ կնքել անշարժ գույքի անհատույց (մշտական) օգտագործման իրավունքի պայմանագիր՝

ապահովելով կնքված պայմանագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ԿՈՂՄ-9

ԴԵՄ-0

ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի N 15-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

/Ձեկ՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի (այսուհետ՝ Համայնք) ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ-, դեմ-, ձեռնպահ-, Համայնքի ավագանին **որոշում է.**

1. Համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի Քարաշեն գյուղի Արցախյան խճուղի թիվ 17 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն աճ ուրդային կարգով օտարելու մասին» N15-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) 1-ին կետում «201960 (երկու հարյուր մեկ հազար ինը հարյուր վաթսուն) ՀՀ դրամ» թիվը և բառերը փոխարինել «100980 (մեկ հարյուր հազար ինը հարյուր ութսուն) ՀՀ դրամ» թիվով և բառերով:

2. Որոշման 1-ին կետից հետո Որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին կետով.

«1.1. սահմանել, որ աճուրդով օտարվող գույքի նոտարական վավերացման և պետական գրանցման համար նախատեսված պարտադիր վճարները պետք է կատարվեն գնորդի կողմից»:

3. Առաջարկել Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթներ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՅԻՆ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի N 16-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի (այսուհետ՝ Համայնք) ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ-, դեմ-, ձեռնպահ-, Համայնքի ավագանին որոշում է.

1. Համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի Տեղ գյուղի Ս.Բարխուդարյան փողոցի թիվ 1/3/2/2 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդային կարգով օտարելու մասին» N16-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) 1-ին կետում «51480 (հիսունմեկ հազար չորս հարյուր ութսուն) ՀՀ դրամ» թիվը և բառերը փոխարինել «25740(քսանհինգ հազար յոթ հարյուր քառասուն) ՀՀ դրամ» թվով և բառերով:

2. Որոշման 1-ին կետից հետո Որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին կետով.

«1.1. սահմանել, որ աճուրդով օտարվող գույքի նոտարական վավերացման և պետական գրանցման համար նախատեսված պարտադիր վճարները պետք է կատարվեն գնորդի կողմից»:

3. Առաջարկել Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթներ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 25-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

/Զեկ՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի (այսուհետ՝ Համայնք) ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, Համայնքի ավագանին **որոշում է.**

1. Համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի Տեղ գյուղի 12-րդ փողոցի թիվ 25/1 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդային կարգով օտարելու մասին» N25-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) 1-ին կետում «635469.12 (վեց հարյուր երեսունհինգ հազար չորս հարյուր վաթսունինը ամբողջ տասներկու հարյուրերորդական) ՀՀ դրամ» թիվը և բառերը փոխարինել «317734.56 (երեք հարյուր տասնյոթ հազար յոթ հարյուր երեսունչորս ամբողջ հիսունվեց հարյուրերորդական) ՀՀ դրամ» թվով և բառերով:

2. Որոշման 1-ին կետից հետո Որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին կետով.

«1.1. սահմանել, որ աճուրդով օտարվող գույքի նոտարական վավերացման և պետական գրանցման համար նախատեսված պարտադիր վճարները պետք է կատարվեն գնորդի կողմից»:

3. Առաջարկել Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթներ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 26-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

/Ձեկ՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի (այսուհետ՝ Համայնք) ղեկավարի առաջարկությունը, Համայնքի ավագանին **որոշում է.**

1. Համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի Տեղ գյուղի 12-րդ փողոցի թիվ 5 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդային կարգով օտարելու մասին» N26-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) 1-ին կետում «409935.24 (չորս հարյուր ինը հազար ինը հարյուր երեսունհինգ ամբողջ քսանչորս հարյուրերորդական) ՀՀ դրամ» թիվը և բառերը փոխարինել «204967,62 (երկու հարյուր չորս հազար ինը հարյուր վաթսուներեք ամբողջ վաթսուներկու հարյուրերորդական) ՀՀ դրամ» թվով և բառերով:

2. Որոշման 1-ին կետից հետո Որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին կետով.

«1.1. սահմանել, որ աճուրդով օտարվող գույքի նոտարական վավերացման և պետական գրանցման համար նախատեսված պարտադիր վճարները պետք է կատարվեն գնորդի կողմից»:

3. Առաջարկել Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթներ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ԼՍԵՑԻՆ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 29-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

/Զեկ՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի (այսուհետ՝ Համայնք) ղեկավարի առաջարկությունը, Համայնքի ավագանին **որոշում է.**

1. Համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի Տեղ գյուղի Արցախի խճուղի թիվ 12/5 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդային կարգով օտարելու մասին» N29-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) 1-ին կետում «102960 (մեկ հարյուր երկու հազար ինը հարյուր վաթսուն) ՀՀ դրամ» թիվը և բառերը փոխարինել «51480(հիսունմեկ հազար չորս հարյուր ութսուն) ՀՀ դրամ» թվով և բառերով:

2. Որոշման 1-ին կետից հետո Որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին կետով.

«1.1. սահմանել, որ աճուրդով օտարվող գույքի նոտարական վավերացման և պետական գրանցման համար նախատեսված պարտադիր վճարները պետք է կատարվեն գնորդի կողմից»:

3. Առաջարկել Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթներ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼԱՅՆՑԻՆ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ
ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂ ԳՅՈՒՂԻ ԱՐՑԱԽԻ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 12/3 ՀԱՅՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ
ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ և 67-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշմամբ, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի (այսուհետ՝ Համայնք) առաջարկությունը, Համայնքի ավագանին **որոշում է.**

1. Տալ հավանություն՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի Տեղ գյուղի Արցախի խճուղի թիվ 12/3 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.01823 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության «Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր» գործառնական նշանակության (կադաստրային ծածկագիր՝ 09-101-0058-0022) հողամասն աճուրդային կարգով օտարելուն՝ չորանոց կառուցելու նպատակով, մեկնարկային գին սահմանելով 28154.412 (քսանութ հազար մեկ հարյուր հիսունչորս ամբողջ չորս հարյուր տասներկու հազարերորդական) ՀՀ դրամ:
2. Համայնքի ղեկավարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N22-Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Ձեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, Համայնքի ավագանին **որոշում է.**

Տալ հավանություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի «Տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը» հաստատելու մասին՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N22-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելուն՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ
ՀԱՄԱՅՆՔԻ 2021-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆ Ի
ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Ձեկ. ԱԱՏՂԻԿ ՂԱՐԱԳՅՈՂՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի (այսուհետ՝ Համայնք) առաջարկությունը, Համայնքի ավագանին **որոշում է.**

1. Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2021-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. ՀՀ Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ԿՈՂՄ-9

ԴԵՄ-0

ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ
ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՉՈՐՐՈՐԴ
ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ԱԱՏՂԻԿ ՂԱՐԱԳՅՈՂՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթներով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ կետով, Համայնքի ավագանին **որոշում է.**

Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարի հաղորդումը Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի բյուջեի 2023 թվականի կատարման չորրորդ եռամսյակի ընթացքի մասին՝ համաձայն բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության 1-6 հատվածների:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ԿՈՂՄ-9

ԴԵՄ-0

ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՅ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու կանոնակարգի 96-րդ կետով, Համայնքի ավագանին **որոշում է.**

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու հերթական վեցերորդ նստաշրջանի երկրորդ նիստի գումարման օր սահմանել 2024 թվականի մարտի 14-ին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ԿՈՂՄ-9

ԴԵՄ-0

ՁԵՆՆՊԱՀ-0

Որոշումն ընդունվեց

Օրակարգի բոլոր հարցերը սպառվեցին: Նիստը ավարտվեց ժամը 14:35-ին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Առաքելյան Վահե

Դալլաքյան Արման

Բաղդասարյան Նազիկ

Ղուլունց Դավիթ

Ղուկասյան Արագած

[Signature] Միրզոյան Արամ

[Signature] Միրբայելյան Աննա

[Signature] Շեգունց Ռոմիկ

[Signature] Սիմոնյան Լորա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՂԱԿԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ

ՆԻՍԱՇ ԱՐՁԱՆԱԳՐԵՑ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

[Signature]

ԼԻԱՆԱ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page]